

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՊԵԿ-ՀՄԱ-ԾՁԲ-26/3**

ք.Երևան

«31» օգոստոսի 2026թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս ՀՀ պետական եկամուտների կոմիտե գլխավոր քարտուղար Դ.Մաթևոսյանի, որը գործում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԲՅՈՒՐՈ ՎԱՆ ԴԻԿ» էլեկտրոնիկայի հրատարակություններ ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Մարտին Լուպտակիի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տվյալների հավաքման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն:

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները:

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **153 000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ, բայց ոչ ավել քան 65 047 950 (Վաթսունհինգ միլիոն քառասունյոթ հազար ինը հարյուր հիսուն) ՀՀ դրամ:** Առաջարկվող գինը ներկայացվել է արժույթով՝ (Եվրո) և դա համեմատվել է Հայաստանի Հանրապետության դրամով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված, բացման օրվա փոխարժեքով՝ 26.08.2026թ. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքը կազմել է 425.15 ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի

միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկներ կայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի գիծում՝ պահանջի գիծման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի գիծման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են քանակությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7

ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011054013
ՀՎՀՀ 02647057

ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

ԿԱՏԱՐՈՂ

«ԲՅՈՒՐՈ ՎԱՆ ԴԻԿ» էլեկտրոնիկայի
հրատարակություններ ՍՊԸ
Route du Nant-d'Avril 150, 1217, Meyrin, Switzerland,
Bank Name: JPMorgan Chase Bank,
N.A., Zurich Branch
Հ/Հ IBAN: CH9408635008770000977
ՀՎՀՀ CHE-101.976.861
«ԲՅՈՒՐՈ ՎԱՆ ԴԻԿ» էլեկտրոնիկայի
հրատարակություններ ՍՊԸ-ի տնօրեն՝

Դ.Մաթևոսյան



Մ.Լիպյուպ

(ստորագրություն)

Կ.Տ
BUREAU VAN DIJK
EDITIONS ELECTRONIQUES SARL
RUE DU NANT D'AVRIL 150
1217 MEYRIN
SWITZERLAND

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ծառայության*					
Զ/Հ	անվանումը	CPV կոդ	տեխնիկական բնութագիրը	չ/մ	ընդհանուր գինը ՀՀ դրամ
			Նախատեսվում է հասանելիության տրամադրում «Բյուրո Վան Դիկ» կազմակերպության TPCatalyst առևտրային տվյալների բազային: Հասանելիության ստացմամբ հնարավոր կլինի տեղեկություններ ստանալ աշխարհի շուրջ 400 մլն. կազմակերպությունների վերաբերյալ, նե- րադրյալ ՀՀ կազմակերպությունների: Ծառայությունը ձեռքբերելով ՀՀ ՊԵԿ-ը հասանելիություն կունենա 400 մլն կազմակերպությունների ֆինանսական հաշվետվություններին, ոչ նյութական ակտիվների օգտագործման իրավունքի տրամադրման դիմաց կիրառվող ողյաթիների և կազմակերպությունների վարկային վարկանիշների վերաբերյալ տվյալների: Ծառայությունը մատուցվում է տարեկան մեկ անգամ: «Ծառայությունը հասանելիություն կտա. . TP Catalyst Standard գործիքին, . Orbis Global գործիքին (ոչ ամբողջությամբ, միայն TP Catalyst գործիքի համար). . Ոչ նյութական ակտիվների օգտագործման իրավունքի դիմաց ողյաթիների պայմանագրերին, . Վարկային պայմանագրերին, . EDF-X Transfer Pricing գործիքին,		
1	Տվյալների հավաքման ծառայություններ	72311170/1	Նախատեսվում է հասանելիության տրամադրում «Բյուրո Վան Դիկ» կազմակերպության TPCatalyst առևտրային տվյալների բազային: Հասանելիության ստացմամբ հնարավոր կլինի տեղեկություններ ստանալ աշխարհի շուրջ 400 մլն. կազմակերպությունների վերաբերյալ, նե- րադրյալ ՀՀ կազմակերպությունների: Ծառայությունը ձեռքբերելով ՀՀ ՊԵԿ-ը հասանելիություն կունենա 400 մլն կազմակերպությունների ֆինանսական հաշվետվություններին, ոչ նյութական ակտիվների օգտագործման իրավունքի տրամադրման դիմաց կիրառվող ողյաթիների և կազմակերպությունների վարկային վարկանիշների վերաբերյալ տվյալների: Ծառայությունը մատուցվում է տարեկան մեկ անգամ: «Ծառայությունը հասանելիություն կտա. . TP Catalyst Standard գործիքին, . Orbis Global գործիքին (ոչ ամբողջությամբ, միայն TP Catalyst գործիքի համար). . Ոչ նյութական ակտիվների օգտագործման իրավունքի դիմաց ողյաթիների պայմանագրերին, . Վարկային պայմանագրերին, . EDF-X Transfer Pricing գործիքին,	դրամ	65 047 950
					Ծառայության մատուցումը իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 365 օրացույցային օրվա ընթացքում:

Ծառայության մատուցման նկարագիր

Պատվիրատու	ՀՀ Պետական եկամուտների կոմիտե
Հաճախորդը և Bureau van Dijk Editions Electroniques Sarl-ը («Moody's») համաձայնում են ծառայության մատուցման սույն նկարագրի պայմաններին, ինչպես նաև ստորև նշված Արտադրանքի, Բովանդակության և Ծառայությունների համար նախատեսված լրացուցիչ պայմանների հետ, եթե այդպիսիք առկա են («Արտադրանքի Պայմաններ»), որոնք ամբողջությամբ ներառված են սույն նկարագրում՝ սույն հղումով, և կարգավորում են Հաճախորդին ստորև նշված Արտադրանքի, Բովանդակության և/կամ Ծառայությունների տրամադրումը:	

Պատվիրված Արտադրանք, Բովանդակություն կամ Ծառայություններ	Ծառայության Պայմաններ	Օգտագործման Պարամետրեր	Մատակարարման եղանակներ
TP CATALYST Standard	https://www.moody.com/web/en/us/legal/product-terms-and-conditions/catalyst.html	Թույլատրելի Կայք/Լիազորված Օգտագործում. Նախատեսված է Հայաստանում գտնվող Հաճախորդի կողմից՝ հարկային/տրանսֆերային գնագոյացման նպատակներով օգտագործման համար: Լիազորված Օգտատերեր. Միաժամանակյա օգտատերեր՝ 5	ՎԵԲ
Orbis Global	https://www.moody.com/web/en/us/legal/product-terms-and-conditions/orbis.html	Թույլատրելի Կայք/Լիազորված Օգտագործում. Նախատեսված է Հայաստանում գտնվող Հաճախորդի կողմից՝ հարկային/տրանսֆերային գնագոյացման նպատակներով օգտագործման համար: Հասանելի է միայն TP Catalyst Standard-ի միջոցով (Orbis Global և Royalty Agreements Module): Լիազորված Օգտատերեր. Միաժամանակյա օգտատերեր՝ 5	ՎԵԲ
ROYALTY AGREEMENTS MODULE (ՀԱՐԱԿԻՑ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄՈԴՈՒԼ)			
LOAN AGREEMENTS MODULE (ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄՈԴՈՒԼ)			
EDF-X Transfer Pricing Enhanced Loan Module (Ընդլայնված Վարկային Մոդուլ)	https://www.moody.com/web/en/us/legal/product-terms-and-conditions/edf-x.html	Ներառում է MIR Median Credit Spread-ը: Վարկերի քանակ. Մինչև 10,000 վարկ ժամկետի յուրաքանչյուր տարվա համար:	ՎԵԲ; Հոսթինգային

Պատվիրված Արտադրանք, Բովանդակություն կամ Ծառայություններ	Ծառայության Պայմաններ	Օգտագործման Պարամետրեր	Մատակարարման եղանակներ
MIR Median Credit Spread	Կիրառելի չէ	Stu EDF-X-ի Օգտագործման Պարամետրերը:	Վեբ; Հոսթինգային

ՎՃԱՐՆԵՐ	
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎՃԱՐ.	153,000.00 եվրո (EUR) Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Լրացուցիչ Պայմաններ և Դրույթներ.

1. Լրացուցիչ Օգտագործման Պարամետրեր:

1.1. Catalyst-ի Լրացուցիչ Պայմաններ. Բացառապես վերևում նշված TP CATALYST Standard Արտադրանքի և Բովանդակության առնչությամբ կիրառվում են հետևյալ լրացուցիչ պայմանները և դրույթները:

1.1.1. Ուսուցում. Moody's-ը սեփական հաշվին կտրամադրի ողջամիտ ուսուցում սույն նկարագրով նախատեսված Catalyst Արտադրանքի և Բովանդակության օգտագործման վերաբերյալ՝ կամ հեռակա կարգով, կամ, եթե կողմերի միջև համաձայնեցվի, կողմերից որևէ մեկի տարածքում. ընդ որում՝ Moody's-ը լրացուցիչ կապահովի աջակցության գիծ (helpline)՝ Moody's-ի բացարձակ հայեցողությամբ ողջամիտ համարվող ծավալով:

1.2. EDF-X փաթեթի Լրացուցիչ Պայմաններ. Բացառապես վերևում նշված EDF-X Transfer Pricing Արտադրանքի և Բովանդակության առնչությամբ լրացուցիչ պայմաններ և դրույթներ չեն կիրառվում:

1.3. Orbis-ի Լրացուցիչ Պայմաններ. Բացառապես վերևում նշված Orbis Global, ROYALTY AGREEMENTS MODULE Արտադրանքի և Բովանդակության առնչությամբ կիրառվում են հետևյալ լրացուցիչ պայմանները և դրույթները:

1.3.1. Ուսուցում. Moody's-ը սեփական հաշվին կտրամադրի ողջամիտ ուսուցում սույն նկարագրով նախատեսված Orbis Արտադրանքի և Բովանդակության օգտագործման վերաբերյալ՝ կամ հեռակա կարգով, կամ, եթե կողմերի միջև համաձայնեցվի, կողմերից որևէ մեկի տարածքում. ընդ որում՝ Moody's-ը լրացուցիչ կապահովի աջակցության գիծ (helpline)՝ Moody's-ի բացարձակ հայեցողությամբ ողջամիտ համարվող ծավալով:

2. Տվյալների Մշակման Ժամանակացույց. Moody's-ի կողմից Արտադրանքի, Բովանդակության և հարակից Ծառայությունների տրամադրումը, ինչպես նաև Հաճախորդի կողմից դրանց օգտագործումը կամ ստացումը ենթակա են Moody's-ի տվյալների մշակման պայմաններին, որոնք հասանելի են www.moody.com/coretermsdps հասցեով և պարբերաբար թարմացվում են:

3. Լրացուցիչ Օգտագործման Սահմանափակումներ. Հաճախորդը իրավունք չունի՝ (ա) օգտագործել Արտադրանքը, Արտադրանքի Արդյունքը, Բովանդակությունը, Մատակարարվող Նյութերը կամ Փաստաթղթավորումը՝ մրցակցային արտադրանք կամ ծառայություն ստեղծելու կամ մշակելու, Արտադրանքին կամ Բովանդակությանը նման հատկանիշներով արտադրանք

կամ ծառայություն ստեղծելու կամ մշակելու, կամ այլ կերպ Արտադրանքը կամ Բովանդակությունը կրկնօրինակելու համար, կամ (բ) որևէ կերպ օգտագործել Արտադրանքը, Արտադրանքի Արդյունքը, Բովանդակությունը, Մատակարարվող Նյութերը կամ Փաստաթղթավորումը արհեստական բանականության տեխնոլոգիաների կամ գործիքների կամ մեքենայական ուսուցման մոդելների հետ կապված (այդ թվում՝ առանց սահմանափակման՝ ուսուցման կամ մշակման նպատակներով), բացառությամբ Արտադրանքի Պայմաններում այլ կերպ նշված դեպքերի, ինչպես նաև բացառությամբ Հաճախորդի ներքին, ընդհանուր նշանակության, բիզնես արտադրողականության ծրագրային գործիքներում (օրինակ՝ տեքստային խմբագրիչներում, էլ. փոստի և օրացույցի կառավարման ծրագրերում և աղյուսակների ծրագրերում) առկա արհեստական բանականության ֆունկցիոնալության, երբ նման ֆունկցիոնալությունը երկրորդական է ծրագրի նախատեսված նպատակի համար: Moody's-ի կողմից սույն նկարագրով մատակարարվող որևէ Բովանդակություն կամ Արտադրանք, որը վերաբերում է առանձին ֆիզիկական անձանց, չի կարող օգտագործվել՝ (i) ֆիզիկական անձի՝ վարկի, ապահովագրության, զբաղվածության, պետական նպաստների կամ արտոնագրերի կամ ցանկացած այլ՝ ֆիզիկական անձի կողմից նախաձեռնված գործարքի իրավունակությունը սահմանելու համար. (ii) ֆիզիկական անձի կողմից պահվող հաշվի գծով պարտքի գանձման համար. (iii) որոշելու՝ արդյոք ֆիզիկական անձը շարունակում է բավարարել հաշվի պայմանները, կամ (iv) եթե Արտադրանքը, Բովանդակությունը կամ Ծառայությունները նախատեսվում են օգտագործվել Միացյալ Նահանգներում կամ Միացյալ Նահանգների վրա ազդեցության համար, ապա ցանկացած այլ նպատակով, որը կդասակարգվեր որպես «սպառողական հաշվետվություն» կամ «թույլատրելի նպատակ»՝ ԱՄՆ Արդար Վարկային Հաշվետվության մասին ակտի (Fair Credit Reporting Act), 15 U.S.C. §§ 1681 և հաջորդող հոդվածների իմաստով: Արտադրանքը որոշումներ չի կայացնում Հաճախորդի կամ որևէ այլ անձի անունից, մասնավորապես՝ Արտադրանքը չի կայացնում և նախատեսված չէ կայացնելու Ամբողջովին Ավտոմատացված Որոշումներ: Եթե այլ բան նախատեսված չէ կիրառելի օրենսդրությամբ կամ դրան համապատասխան թույլատրված չէ, Հաճախորդը իրավունք չունի՝ (i) օգտագործել Արտադրանքը կամ Բովանդակությունը Ամբողջովին Ավտոմատացված Որոշումներ կայացնելու համար, կամ (ii) օգտագործել որևէ Արտադրանք և/կամ Բովանդակություն որևէ գործիքի, լուծման կամ արտադրանքի հետ կապված, որը կայացնում է Ամբողջովին Ավտոմատացված Որոշումներ: Սույն բաժնում «Ամբողջովին Ավտոմատացված Որոշումներ» նշանակում է անձնական տվյալների ավտոմատացված մշակման հիման վրա կայացված որոշումներ, կանխատեսումներ կամ առաջարկություններ, որոնք կարող են իրավական կամ դրան համարժեք նշանակալի ազդեցություն ունենալ ֆիզիկական անձանց վրա՝ առանց իմաստային մարդկային վերահսկողության կամ ներգրավվածության: Moody's-ը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխել սույն նկարագրում հիշատակված Արտադրանքի Պայմանները՝ հրապարակելով դրանց փոփոխված տարբերակը: Փոփոխված տարբերակն ուժի մեջ կմտնի ազդակիր Արտադրանքի, Բովանդակության կամ Ծառայությունների հաջորդ. Երկարաձգման Ժամկետի սկզբից, բացառությամբ՝ (i) օրենքով, կանոնակարգով կամ դատական ակտով պահանջվող փոփոխությունների, որոնք ուժի մեջ կմտնեն անհապաղ, և (ii) Լիցենզատուների կողմից պահանջվող փոփոխությունների:

4. Գաղտնիություն. «Գաղտնի Տեղեկատվություն» նշանակում է Moody's-ի, Հաճախորդի կամ նրանց համապատասխան Ասոցիացված Անձանց («Բացահայտող Կողմ») կողմից մյուս կողմին («Ստացող Կողմ») բանավոր կամ գրավոր ձևով բացահայտված ցանկացած տեղեկատվություն, որը նշանակված է որպես գաղտնի կամ որը, հաշվի առնելով տեղեկատվության բնույթը և բացահայտման հանգամանքները, ողջամտորեն պետք է դիտարկվի որպես գաղտնի: Առանց վերոնշյալի ընդհանրական բնույթը սահմանափակելու՝ (ա) Հաճախորդի Գաղտնի Տեղեկատվությունը ներառում է նրա Ձեռնարկատիրական Տվյալները. և (բ) Moody's-ի Գաղտնի Տեղեկատվությունը ներառում է Արտադրանքը, Բովանդակությունը, Ծառայությունները և

մատակարարվող նյութերը, այդ թվում՝ ցանկացած մոդել, ծրագրակազմ, տվյալներ, տվյալների բազաներ, ալգորիթմներ, նոու-հաու, բանաձևեր, գործընթացներ, գաղափարներ, գյուտեր, սխեմաներ և այլ տեխնիկական տեղեկատվություն, որը տրամադրվում է Արտադրանքի, Բովանդակության և Ծառայությունների միջոցով կամ դրանց հետ կապված: Ստացող Կողմը Բացահայտող Կողմի Գաղտնի Տեղեկատվությունը չի օգտագործի որևէ նպատակով, բացի Պայմանագրով նախատեսվածից, և չի բացահայտի Բացահայտող Կողմի Գաղտնի Տեղեկատվությունը որևէ երրորդ անձի, բացառությամբ իր Ասոցիացված Անձանց, գործակալների, խորհրդատուների, ծառայություններ մատուցողների և խորհրդատուների, ովքեր ունեն Գաղտնի Տեղեկատվությունն իմանալու անհրաժեշտություն՝ Համաձայնագրով նախատեսված նպատակների համար, և ովքեր ենթակա են ոչ-օգտագործման և գաղտնիության դրույթների, որոնք առնվազն նույնքան պաշտպանում են Բացահայտող Կողմին, որքան սույն բաժնում պարունակվողները: Ստացող Կողմը կպաշտպանի Բացահայտող Կողմի Գաղտնի Տեղեկատվությունը առնվազն նույն աստիճանի խնամքով, ինչ օգտագործում է իր սեփական Գաղտնի Տեղեկատվությունը պաշտպանելու համար, սակայն ոչ պակաս, քան ողջամիտ խնամքով: Վերոնշյալ գաղտնիության պարտավորությունները չեն կիրառվում այն տեղեկատվության նկատմամբ, որը կողմը ստացել է այնքանով, որքանով՝ (i) այն օրինական կերպով ստացվել է երրորդ անձից՝ առանց այն գաղտնի պահելու որևէ պարտավորության, (ii) այն հանրորեն հասանելի է կամ դառնում է հանրորեն հասանելի, բացառությամբ չարտոնված բացահայտման դեպքի, (iii) այն ինքնուրույն մշակվել է՝ առանց Բացահայտող Կողմի Գաղտնի Տեղեկատվությանն որևէ հղումի, ինչը հաստատվում է Ստացող Կողմի ժամանակակից գրավոր փաստաթղթերով, կամ (iv) այն պետք է բացահայտվի օրենքի, կանոնակարգի կամ դատական ակտի ուժով, պայմանով, որ Ստացող Կողմը, եթե դա իրավաբանորեն արգելված չէ, կտրամադրի Բացահայտող Կողմին նախնական ծանուցում մինչև նման բացահայտումը և ողջամտորեն կհամագործակցի Բացահայտող Կողմի հետ, Բացահայտող Կողմի հաշվին, նման բացահայտմանը հակադրվելու կամ պաշտպանական կարգադրություն կամ այլ սահմանափակում հայցելու համար: Ստացող Կողմից չի պահանջվում վերադարձնել կամ ոչնչացնել Բացահայտող Կողմի Գաղտնի Տեղեկատվության այն մասերը, որոնք հանդիսանում են էլեկտրոնային տվյալներ, որոնք ընդհանուր առմամբ անհասանելի են կամ պահվել են Ստացող Կողմի պահուստային համակարգերում՝ բիզնեսի սովորական ընթացքում՝ որպես ստանդարտ պահուստավորման ընթացակարգերի մաս, սակայն միայն այնքանով, որքանով նման Գաղտնի Տեղեկատվությունը հասանելի է միայն այն անձ(անց)ին, ում գործառույթը հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաներն են, և պայմանով, որ նման անձ(եր)ը ունեն միայն սահմանափակ հասանելիություն նման Գաղտնի Տեղեկատվությանը՝ իրենց տեղեկատվական տեխնոլոգիաների գործառույթների կատարումն ապահովելու համար: Բացի այդ, Ստացող Կողմը կարող է պահպանել նման Գաղտնի Տեղեկատվության ողջամիտ պատճենները՝ այնքանով, որքանով անհրաժեշտ է կիրառելի աուդիտի, իրավական կամ կարգավորող պահանջներին, մասնագիտական պարտավորություններին և չափանիշներին, ինչպես նաև ներքին փաստաթղթերի պահպանման քաղաքականությանը համապատասխանելու համար:

5. Հասկացությունների Համապատասխանեցում. Սույն նկարագրի իմաստով՝ ստորև Սյունակ Ա-ում թվարկված եզրույթները փոխարինելի են և ունեն նույն նշանակությունը, ինչ Սյունակ Բ-ում նշված եզրույթները, որոնք նախկինում կիրառվել են կողմերի միջև Պայմանագրում և վերջինում հիշատակված կից փաստաթղթերում, յուրաքանչյուր դեպքում՝ համատեքստի թույլատրելիության կամ պահանջի սահմաններում:

Սյունակ Ա	Սյունակ Բ
Հաճախորդ	Հաճախորդ, Բաժանորդ, Ներառյալ՝ ցանկացած թույլատրված փոխկապակցված Անձ կամ թույլատրված Հաճախորդի Խմբի Ընկերություն

Սյունակ Ա	Սյունակ Բ
Բիզնես Տվյալներ	Հաճախորդի Տվյալներ
Պայմանագիր	Գլխավոր պայմանագիր, Ծառայությունների Բաժանորդագրության Գլխավոր պայմանագիր, MSTTC, Լիցենզիայի և Ծառայությունների Գլխավոր պայմանագիր, Պայմանագիր Պայմաններ, TOA, Գլխավոր պայմանագիր, Հրապարակումների և Ծառայությունների Գլխավոր պայմանագիր, կամ այլ անվանում, որն օգտագործվում է նկարագրի հիմքում ընկած պայմաններին և դրույթներին հղում կատարելու համար
Ժամկետ	Նախնական ժամկետ և ցանկացած երկարաձգման ժամկետ
Արտադրանք և Բովանդակություն	Արտադրանք, Ծրագրակազմ, Ծրագրային Ապահովման Ծրագրեր, Տեղեկատվություն, SaaS Ծրագրակազմ, SaaS Ծրագիր, Հոսթինգ, Տեղակայված Ծրագրային Ապահովում, Լիցենզավորված Ծրագիր, Լիցենզավորված Հարթակ, Հոսթինգային Արտադրանք, Ընդգրկված Արտադրանք, Ընդգրկված Ծրագրեր
Ծառայությունների Մատուցման Նկարագիր	Ժամանակացույց, Աշխատանքի Պատվեր, Աշխատանքի Հայտարարագիր, Փոփոխության Պատվեր, կամ Moody's-ի կողմից ստորագրված այլ փաստաթուղթ, որով սահմանվում են Moody's-ի կողմից մատուցվելիք Ծառայությունները
Moody's-ի Ասոցիացված Անձ	Moody's-ի խմբի Ընկերություն
Հաճախորդի Ասոցիացված Անձ	Հաճախորդի խմբի Ընկերություն
Օգտագործման Պարամետր	Լիցենզիայի Պարամետր
Լիազորված Օգտատերեր	Օգտատերեր, Շահառուներ, Հաճախորդի Վերջնական Օգտատերեր

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7

ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011054013
ՀՎՀՀ 02647057

ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

ԿԱՏԱՐՈՂ

«ԲՅՈՒՐՈ ՎԱՆ ԴԻԿ» էլեկտրոնիկայի
հրատարակություններ ՍՊԸ
Route du Nant-d'Avril 150, 1217, Meyrin, Switzerland,
Bank Name: JPMorgan Chase Bank,
N.A., Zurich Branch
Հ/Հ IBAN: CH9408635008770000977
ՀՎՀՀ CHE-101.976.861
«ԲՅՈՒՐՈ ՎԱՆ ԴԻԿ» էլեկտրոնիկայի
հրատարակություններ ՍՊԸ-ի տնօրեն՝




Մ.Լուպտակ

(ստորագրություն)

BUREAU VAN DIJK
EDITIONS ELECTRONIQUES SARL
RUE DU NANT D'AVRIL 150
1217 MEYRIN
SWITZERLAND

Պայմանագրի կողմ

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «
» « » 20 թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը
հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների						
		տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ Վճարման ժամ անա կացո ւյցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և
դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն

ԾԱՆՈԻՑՈՒՄ

_____ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. _____-ի և _____-ի միջև «--» 20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը կատարողի անվանումը

«-----/-----» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_____ -ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «-----» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.10 կետով սահմանված պահանջներին:

_____ (ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը))

_____ ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.